

որով ծնաւ, խաչեցաւ, մեռաւ եւ յարեաւ, եւ 125
 նստաւ ընդ աջմէ Հօր, ըստ կանխասացութեանն
 Գաւթի. որ եւ գալոց է ի դատել զկենդանիս եւ
 զմեռեալս. որում հաւատացեալ սպասեմք, եւ ակն
 ունիմք յարութեանն եւ դատասպանի եւ հա-
 տուցման գործոց: 130

Ընդ նմին խոստովանիմք զմայրն Յիսուսի՝
 Աստուածածին. որպէս եւ ՂԱԿՈՒՄՅՆ՝ ԶՆԷՄԼ, եւ
 զնոյնն ի խաչ ելեալ, ըստ Գրիգորի Աստուածա-
 բանին, որ ասէ առ որ գրեացն «եթէ որ զՄա-
 րիամ՝ Աստուածածինն ոչ իմանայցէ, հեռի է 135
 յԱստուածութենէն. եւ եթէ խաչելոյն որ երկիր
 ոչ պագանիցէ. նզովեալ եղիցի:»

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին Աստուած
 կատարեալ, «նէլով բղխումն մշտնջենաւոր առ ի
 Հօրէ, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ 140
 յԱռաքեալան, եւ էջ ի Յորդանան գետ, եւ ի սուրբ
 վերնատունն, հոգի պետութեան, հոգի զօր-նէան,
 հոգի բերանոյ Աստուծոյ, ի նորոն եւ-նէնէ Հօր եւ
 Որդւոյ, ոչ արարած, ոչ ծառայ, եւ ոչ հրամա-
 նառու, այլ հրամանատու: Մի գործ է Հօր եւ 145
 Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. որպէս ասաց Փրկիչն
 աշխարհաց, թէ ես՝ Հայր եւ Հոգին ճշմարտու-
 թեան, որ ի Հօրէ ելանէ՝ եւ ոչ բաժանի, բղխի՝ եւ
 ոչ սպառի. եւ ինքն է Աստուած խնկեալ տիրապէս
 յամէն յամենայնի: 150

Հաւատամք եւ զհամաշխարհական կաթու-
 ղիկէ եկեղեցի սուրբ. զթողութիւն մեկաց. հաս-
 տատեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգա-
 րէից եւ վարդապետաց՝ ըստ Պօղոսի. «զոր եդ Աս-
 տուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս. 155
 երկրորդ՝ զմարգարէս. երրորդ՝ զվարդապետս.» եւ
 զի լուսաւոր բանիւք ԱԿԿՈՒԹՅՈՅ հաստատեալ մնայ
 սուրբ եկեղեցի անդրդուելի եւ անսասանելի յաւի-
 տեանս յաւիտենից: Եւ զի՝ կառուցեալ է սա ի
 վիմէն կենդանութեան, որ է ինքն Քրիստոս Աս- 160